

## Արձանագրություն №6/2021-2022

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2022թ. հունվարի 14-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 68-ը (վաթսունութ):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Մինչ նիստը սկսելը ռեկտոր Հ. Հովհաննիսյանը որոշ տեղեկություններ ներկայացրեց ԵՊՀ-ում կատարվող և նախատեսվող աշխատանքների մասին: ՀԲԸՄ-ից ստացված միջոցների հաշվին ձեռք են բերվել 10 «Clevertouch» ինտերակտիվ էկրաններ, որոնք նպաստելու են ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը: Իրականացվել է բոլոր մասնաշենքերի և հարակից տարածքների չափագրում՝ հետագայում տարածքն ավելի շահավետ օգտագործելու նպատակով: Ավտոպարկի կարիքների լրացման համար գնվել է 18 տեղանոց մինիավտոբուս: Աշխատանքներ են ընթանում ԵՊՀ «Brandbook»-ի ստեղծման ուղղությամբ: Նախատեսվում է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճակատային հատվածի օդափոխության արտաքին սարքերի ապամոնտաժում և միասնական օդափոխության համակարգի, մասնաշենքի արտաքին լուսավորության նոր համակարգի ներդնում, ինչպես նաև կենտրոնական մասնաշենքի ձեմասրահի հիմնովին, նոր տեսքով վերանորոգում: Բացի այդ, ԵՊՀ բյուջեով նախատեսվում է ֆիզիկամաթեմատիկական հատվածի մասնաշենքի հիմնանորոգում, ինչպես նաև այլ աշխատանքների իրականացում Կիևյան փողոցում գտնվող մասնաշենքի, Ծաղկաձորի համալսարանական հյուրատան հետ կապված: 44-օրյա պատերազմի նահատակներին նվիրված հուշակոթողի վերաբերյալ կան էսքիզային առաջարկներ, ճարտարապետների կողմից ներկայացված որոշ լուծումներ և այլն:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանն անդրադարձավ նաև ԵՊՀ-ում կառուցվածքային փոփոխությունների անխուսափելիությանը՝ նշելով, որ անհրաժեշտ է դառնում ամբիոնների խոշորացումը, որը կսկսվի ֆակուլտետներից առաջարկներ ստանալուց հետո, ինչի նպատակը լինելու է ուսումնական գործընթացի առավել արդյունավետ դարձնելը:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Պրոֆեսորի գիտական կոչման շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. ԵՊՀ գիտական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ գիտքարտուղար Լ. Շնվսեփյան):
3. ԵՊՀ կառուցվածքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին (զեկ.՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
4. Հաղորդում ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):
5. Հաղորդում ԵՊՀ 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):

**Ընթացիկ հարցեր**

6.1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. մաս առաջին» (հեղ.՝ Վ. Հովհաննիսյան, Ս. Մեղրյան, Ա. Ղարսյան, Տ. Մարկոսյան, Վ. Եսայան, Պ. Թադևոսյան, Վ. Գրիգորյան, Ա. Միքայելյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու մասին:

6.2. «Թալիշերենի դասագիրք» (հեղ.՝ Վ. Ոսկանյան, Հ. Ավչյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու մասին:

**1.Լսեցին.**-Պրոֆեսորի գիտական կոչման շնորհման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց, որ հանձնաժողովն ուսումնասիրել է պրոֆեսորի գիտական կոչման 1 հավակնորդի ներկայացրած փաստաթղթային փաթեթը, ինչի արդյունքում պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդը ստացել է դրական երաշխավորություն և ներկայացվել գիտական խորհրդի հաստատմանը:

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Ոսկանյան Վարդան Ստեփանի	Իրանագիտության ամբիոնի վարիչ, դոցենտ

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Հայկ Սարգսյան (նախագահ)
2. Պարույր Վարդերեսյան
3. Սյունե Ստեփանյան

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 68 անդամներից 66-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Սարգսյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Ոսկանյան Վարդան Ստեփանի	63	3	0

**Որոշեցին.** - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

**2.Լսեցին.**- ԵՊՀ գիտական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ 2021-22 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցով նախատեսվում է գիտական խորհրդի 5 նիստի անցկացում՝ օրակարգային 18 հարցերի ներառմամբ:

**Որոշեցին.** – Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

**3.Լսեցին.**- ԵՊՀ կառուցվածքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ԵՊՀ կառուցվածքում փոփոխությունների փաթեթը, ըստ որի առաջարկվում է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունը բաժանման եղանակով վերակազմակերպել Անձնակազմի կառավարման բաժնի և Իրավաբանական ծառայության, Մինչհամալսարանական կրթության վարչությունը՝ Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինը՝ Դոկտորական կրթության կենտրոնի, Հանրային կապերի ծառայությունը՝ Հանրային կապերի և մարքեթինգի վարչության, Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը՝ Շարունակական կրթության կենտրոնի: Առաջարկվում է սեփական կազմավարական պլանավորման կենտրոն, լուծարել Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբը, ինչպես նաև

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Տավուշ» հետազոտական կենտրոնը: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը հետաքրքրվեց կառուցվածքային փոփոխությունների հարցում ԵՊՀ գիտխորհրդի իրավասության մասին, ինչին ի պատասխան ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ ԵՊՀ կանոնադրության մեջ հաստատություն չկա և ավանդույթի ուժով ԵՊՀ գիտխորհուրդն է առաջարկներ ներկայացրել Հոգաբարձուների խորհրդին: Ըստ նրա՝ ճիշտ մոտեցումը այն է, որ կառուցվածքային փոփոխությունների հարցը վերապահվի միանգամից հոգաբարձուների խորհրդի իրավասությանը: Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Թադևոսյանը նկատեց, որ ԵՊՀ գործող կանոնադրությամբ կառուցվածքային փոփոխությունները առաջարկում է գիտխորհուրդը, իսկ հետագայում կանոնադրային փոփոխությունների դեպքում իրավասությունների դաշտը ավելի կհստակեցվի: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նկատեց, որ ըստ կանոնադրության գիտխորհուրդն է առաջարկությամբ դիմում հոգաբարձուների խորհրդին և այլ կանոնադրային մարմին չկա, քանի որ իրավունքը կրող սուբյեկտը գիտխորհուրդն է, և ռեկտորը դիմում է վերջինիս: Ռ. Մելքոնյանը հետաքրքրվեց, թե ստեղծվելիք դոկտորական կրթության կենտրոնը արդյո՞ք գործելու է միաստիճան համակարգի տրամաբանությամբ, ինչին ի պատասխան Հ. Հովհաննիսյանը նկատեց, որ բարձրագույն կրթության ու գիտության մասին նոր օրենքի ընդունման դեպքում կենտրոնը գործելու է արդեն այդ տրամաբանությամբ: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը ևս նկատեց, որ ստեղծվելիք դոկտորական կրթության կենտրոնի հետ կապված առաջանում են հարցեր, քանի որ նոր օրենքի դեռևս ընդունված չլինելու պարագայում անիմաստ է դառնում, ուստի առաջարկեց սպասել նոր օրենքի ընդունմանն ու նոր դրանից բխող փոփոխությունների իրականացմանը: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանն ի պատասխան նշեց, որ ֆունկցիոնալ առումով որևէ խանգարող հանգամանք չկա, գործառության մասով խնդիրներ չեն առաջանա: Ռ. Մելքոնյանը և ՈւԽ նախագահ Դ. Ափոյանը հետաքրքրվեցին ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի լուծարման հիմքերի ու հիմնավորման մասին՝ առաջարկելով հարցի քննարկումը հետաձգել: Ի պատասխան՝ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը նշեց, որ ԻՄ կանոնադրության համաձայն՝ կենտրոնը կարող է լուծարվել տնօրինության առաջարկով՝ առանց գիտխորհրդի քննարկման: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ևս նշեց, որ կենտրոնի լուծարման վերաբերյալ ներկայացվել է հիմնավորումը և մասնաճյուղի տնօրինության որոշումը՝ առաջարկելով անցնել ներկայացված կառուցվածքային փոփոխությունների քվեարկությանը կետ առ կետ:

**Որոշեցին.** - Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝

1) Երևանի պետական համալսարանի «Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը բաժանման եղանակով

վերակազմակերպել «Անձնակազմի կառավարման բաժին» և «Իրավաբանական ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումների:

2) Երևանի պետական համալսարանի «Մինչհամալսարանական կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

3) Երևանի պետական համալսարանի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Դոկտորական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

4) Երևանի պետական համալսարանի «Հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանման:

5) Երևանի պետական համալսարանի «Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Շարունակական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

6) Ստեղծել Երևանի պետական համալսարանի «Ռեզիդենտական պլանավորման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

7) Լուծարել Երևանի պետական համալսարանի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբ» կառուցվածքային ստորաբաժանումը:

8) Լուծարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի «Տավուշ» հետազոտական կենտրոնը:

**4.Լսեցին.**- Հաղորդում ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին: Գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի տարեկան կատարողականը պրոֆիցիտային է: Պրոֆիցիտի առաջացմանը նպաստել են պետական բյուջեից գիտական ծրագրերի 65 տոկոսով ֆինանսավորման ավելացմամբ և «Արդշինքանկից» ստացվող տոկոսային եկամուտներից: Ըստ հաղորդման՝ եկամուտները կազմել են 11.1 միլիարդ դրամ, նախատեսվածի նկատմամբ գերակատարվել են 11 տոկոսով, ինչը կազմում է 1.1 միլիարդ ՀՀ դրամ: Եկամուտների 47 տոկոսը կազմում են ուսման վարձավճարներից մուտքերը, որոնք նախատեսվածի նկատմամբ հավաքագրվել են 97.5 տոկոսով: Տարբերություն 2.5 տոկոսը ոչ թե վերաբերվում է թերհավաքումներ, այլ թվով 1123 ուսանողների որպես պատերազմին մասնակցած, կամ մասնակցածների ուսանողների մեկ կիսամյակի ուսման վարձերը փոխհատուցվել են պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչը կազմել է 302 միլիոն դրամ:

Ռ. Գրիգորյանի զեկուցման համաձայն՝ միջին ուսման վարձի չափը ԵՊՀ-ում, հաշվի առած զեղչերը, կազմել է 534 հազար դրամ միջին տարեկան 13570 ուսանողների հաշվարկով: 2021 թվականին ԵՊՀ-ի կողմից վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացված զեղչերը կազմել են 370 միլիոն դրամ թվով 3260 ուսանողների: Միջին հաշվարկով 1 ուսանողին հատկացված ուսման վարձի զեղչի չափը կազմել է 113.2 հազար դրամ:

Ըստ նրա՝ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումները կազմել են ընդհանուր եկամուտների 38 տոկոսը: Նախատեսվածի նկատմամբ գերակատարվել է 27 տոկոսով: Պետական ֆինանսավորման կառուցվածքը հետևյալն է՝ կրթական ծրագրերով 67 տոկոս, գիտական ծրագրերով 30 տոկոս, այլ ծրագրերով 3 տոկոս: Գերակատարումը պայմանավորված է վճարովի համակարգում սովորողների ուսման վարձերի փոխհատուցմամբ՝ 225 միլիոն դրամ: Գիտական թեմատիկ ծրագրերի ֆինանսավորմամբ՝ 625 միլիոն դրամ: Արտերկրներում հայագիտական կենտրոնների պահպանման և հայոց լեզվի դասավանդման ծրագրերի ավելացմամբ՝ 49 միլիոն դրամ: Պետական ֆինանսավորումը 1 ուսանողի համար բարձրագույն կրթության ծրագրերով 2021 թ. համար կազմել է 766.5 հազար դրամ: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորում են միջին տարեկան թվով 2334 ուսանողներ, որոնցից 285-ը հետբուհական կրթությամբ: Կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեությունից այլ եկամուտները նախատեսվածի նկատմամբ գերակատարվել են 3 տոկոսով:

Հաղորդման համաձայն՝ դրամաշնորհային ծրագրերից և բանկերից ստացվող տոկոսներից եկամուտները միասին կազմում են ընդհանուր եկամուտների 12 տոկոսը, այն նախատեսվածի նկատմամբ գերակատարվել է 37 տոկոսով: Գերակատարումը վերաբերվում է «Արդշինբանկից» ստացվող տոկոսային եկամուտներին: Ծախսերը կազմել են 9.7 միլիարդ դրամ, այն նախատեսվածի նկատմամբ կազմել է 95.6 տոկոս:

Գերակատարվել են հետևյալ ծախսերը.

- Անդամավճարներ – 914 հազար դրամ, կամ 9 տոկոսով
- Նպատակային ֆինանսավորման ծախսեր – 6.7 միլիոն դրամ, կամ 2.6 տոկոսով: Պայմանավորված է պետական բյուջեից ֆինանսավորվող արտերկրներում հայագիտական կենտրոնների պահպանման ծրագրերի ավելացմամբ:
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին ֆինանսավորման հոդվածով – 47.5 միլիոն դրամ, կամ 39 տոկոսով: Պայմանավորված է վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրերով:

Աշխատավարձի ծախսերը կազմել են ընդհանուրի 71.8 տոկոսը: ԵՊՀ-ում միջին ամսական աշխատողների թիվը 2021 թ. կազմել է 2650 մարդ, միջին ամսական աշխատավարձը 234 750 դրամ, ներառյալ հարկերը, ինչը նախորդ 2020 թ. համեմատ ավելացել է 26150 դրամով:

Ռ. Գրիգորյանի հաղորդմամբ՝ միջին ամսական աշխատավարձի հաշվարկը դասախոսական անձնակազմի համար հետևյալն է.

Հաստիք	Ամսական դրույքաչափ	Միջին ամսական լրավճար, այդ թվում			Ընդամենը միջին ամսական 1 դրույքի համար
		Գիտակրթական	Հեռակա ուսուցման	Պարգևատրում	
Դոկտոր, պրոֆեսոր	341 000	10 000	20 000	45 000	416 000
Թեկնածու, դոցենտ	284 000	10 000	20 000	38 000	352 000
Թեկնածու, ասիստենտ	236 000	10 000	20 000	31 000	297 000
Դասախոս, առանց գիտական կոչման	200 000	10 000	20 000	27 000	257 000

Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ շարունակվում է նաև 2016թ. ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողների երեխաներին ֆինանսական աջակցության ծրագիրը: Այժմ աջակցություն են ստանում թվով 21 ընտանիքներ, ամսական գումարը կազմում է 40000 – ից 100000 դրամ, որը կախված է անչափահաս երեխաների թվից, իսկ 22 ընտանիքներին վճարվող ամսական ընդհանուր գումարը կազմում է 1,4 միլիոն դրամ: Ուսանողական հանրակացարանում քառօրյա պատերազմի մասնակից թվով 7 ուսանողներ ծառայությունները ստանում են անվճար: Բացի այդ, հաշվետու տարում 10 միլիոն դրամ ուղղվել է «100 տուն Արցախում» ծրագրին աջակցության համար:

Դրամական միջոցների մնացորդը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8.9 միլիարդ դրամ: Իջևանի մասնաճյուղինը՝ 800 միլիոն դրամ:

**Որոշեցին.** - ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5.Լսեցին.**- Հաղորդում ԵՊՀ 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին: Գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյանի ներկայացմամբ՝ նախահաշիվը դեֆիցիտային է, որը կազմում է 360 միլիոն դրամ: Դա պայմանավորված է նախորդ տարում դրամաշնորհային ծրագրերով, մասնավորապես՝ գիտական թեմատիկ ծրագրերով ստացված ֆինանսավորմամբ և հաշվետու տարում նախատեսվող ծախսերի

կատարմամբ: Այսպիսով դեֆիցիտի լրացման աղբյուրը նախորդ տարում ստացված և չծախսված դրամական միջոցների մնացորդն է:

Ըստ հաղորդման՝ 2022 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը ներկայացված է համախմբման եղանակով, այսինքն՝ ԵՊՀ-ի և Իջևանի մասնաճյուղի նախահաշիվները համախմբված են: Նախորդ տարիներում դրանք ներկայացվում և հաստատվում էին առանձին-առանձին: Նախահաշվի 2-րդ կետով ներկայացված է համախմբված, 3-րդ և 4-րդ կետերով միայն ԵՊՀ-ի, 5-րդ կետով միայն Իջևանի մասնաճյուղի նախահաշիվները:

Ռ. Գրիգորյանի հաղորդմամբ՝ համախառն եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելանում են շուրջ 15 (տասնհինգ) տոկոսով: Նախատեսվող բոլոր հոդվածներով եկամուտները ավելանում են, ինչը ցույց է տալիս, որ բոլոր կառուցվածքային միավորները աշխատում և բարելավում են ցուցանիշները, դա նախատեսված էր նաև ԵՊՀ ռազմավարական 5-ամյա (2016-2021 թ.թ.) ծրագրով: Նա առանձնահատուկ նշեց, որ եկամուտների ավելացման հիմնական աղբյուրները հանդիսացել են պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական դրամաշնորհային ծրագրերը և «Արդշինբանկից» ստացվող տոկոսային եկամուտները, որն, իհարկե, պայմանավորված է ԵՊՀ դրամական միջոցների տարեցտարի ավելացումով:

Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ վճարովի համակարգում սովորող ուսանողներին մատուցվող կրթական ծառայություններից եկամուտների ավելացումը էական չէ, և դա պայմանավորված է նրանով, որ շրջանավարտների ուսման տարեկան վարձաչափերը ավելի ցածր են, քան ընդունվողներինը, իսկ ուսանողների թիվը հակառակը՝ շրջանավարտներինը ավելի մեծ է քան ընդունվողներինը: Այս հոդվածով եկամուտների տեսակարար կշիռը տարեցտարի նվազում է, այսպես, օրինակ՝ 5 տարի առաջ այն կազմում էր 63 տոկոսը, իսկ հիմա այն կազմում է 48 տոկոսը, նվազել է շուրջ 15 տոկոսով: Նրա դիտարկմամբ՝ նվազման պատճառները երկուսն են՝ առաջինը ուսանողների թվի կրճատումն է. համեմատության համար 5 տարի առաջ այն կազմում էր 16000, իսկ հիմա՝ 14000: Երկրորդը դա վճարովի համակարգում սովորող այն ուսանողների թվի ավելացումն է, որոնց համար ուսման վարձերը փոխհատուցվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: 5 տարի առաջ այն կազմում էր 268 միլիոն դրամ, իսկ հիմա՝ 450 միլիոն դրամ թվով 1140 ուսանողների համար:

Ռ. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ-ում նվազագույն ուսման վարձի չափը կազմում է 500 հազար դրամ բակալավրի 30 մասնագիտությունների համար ընդհանուր 57-ից: Առավելագույնը՝ 1 միլիոն դրամ ընդամենը մեկ մասնագիտության գծով, մնացած մասնագիտությունների ուսման վարձի չափերը տատանվում են 580-ից 800 հազար դրամի սահմաններում: Ուսման վարձավճարներից նախատեսվող եկամուտները հաշվարկելիս հաշվի է առնվել 400 միլիոն դրամի չափով ուսման վարձի զեղչերի տրամադրում: 2021 թ.-ին տրամադրվել է 370 միլիոն դրամի զեղչ թվով 3260 ուսանողների: ԵՊՀ-ում 2021 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ սովորողների թիվը կազմել է



14000, որոնցից 1200-ը Իջևանի մասնաճյուղում, վճարովի համակարգում սովորողներինը՝ 11500, պետական ֆինանսավորմամբ՝ 2500:

Նրա հաղորդմամբ՝ պետական ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ 28 տոկոսով և համախառն եկամուտներում այն կազմում է 37 տոկոսը: Պետական ֆինանսավորման աղբյուրները բաժանվում են 3 խմբերի: Առաջինը՝ կրթական ծառայությունների համար – ընդհանուր ֆինանսավորման 50 տոկոսը: Երկրորդը՝ գիտական ծրագրերի համար – ընդհանուր ֆինանսավորման 43 տոկոսը: Երրորդը՝ այլ ծրագրերով – 7 տոկոսը, որից 119 միլիոն դրամը ուղղվում է արտերկրներում հայագիտական կենտրոնների պահպանման և հայոց լեզվի դասավանդման ծրագրերի ֆինանսավորմանը և 195 միլիոն դրամը տրվում է ուսանողներին որպես կրթաթոշակներ:

Պետական ֆինանսավորմամբ սովորող 1 ուսանողի գումարը կազմում է 766.5 հազար դրամ:

Ռ. Գրիգորյանը հաղորդեց, որ գիտական ծրագրերի բյուջեն կազմում է շուրջ 2 միլիարդ դրամ, ինչը էական տեսակարար կշիռ է կազմում ընդհանուր նախահաշվում: Մինչև 2021 թ. գիտական ծրագրերի ֆինանսավորման գումարը չի գերազանցել 1 միլիարդ դրամը: ԵՊՀ-ն մասնակցում է նաև համաֆինանսավորմամբ գիտական ծրագրի իրականացմանը, որոնցով համալրվում են լաբորատոր սարքավորումները: Գիտական ծրագրերի ավելացումը էականորեն նպաստել է ԵՊՀ աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը:

Հաղորդման համաձայն՝ կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական այլ գործունեություն մասով եկամուտները կազմում են համախառն եկամուտների 3 տոկոսը: Այս ցուցանիշը բարելավելու նպատակով ԵՊՀ-ն շարունակում է իրականացնել ներդրումային գործունեություն: Կապիտալ վերանորոգվել են ուսանողական հանրակացարանը, մարզահամալիրը, Բյուրականի ուսումնաարտադրական բազան: 2022 թ.-ին պլանավորված է ներդրումային գործունեություն իրականացնել Օաղկաձորի և Դիլիջանի բազաներում: Դրամաշնորհային ծրագրերը ևս ավելացել են և կազմում են ընդհանուր եկամուտների շուրջ 8 տոկոսը: Բանկերից ստացվող տոկոսային եկամուտները կազմում են 4 տոկոսը և ապահովում են աշխատողներին վճարվող պարզևատրումների (13-րդ աշխատավարձի) ամբողջ ծախսերը:

Արհմիության նախագահ Ա. Ավետիսյանը հետաքրքրվեց ֆինանսական տարում աշխատավարձերի բարձրացման հնարավորության մասին, ինչի ի պատասխան՝ Ռ. Գրիգորյանը նշեց, որ ընդհանուր առմամբ բարձրացում նախատեսված չէ: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ի լրումն նկատեց, որ ռազմավարական պլանով նախատեսված է 10 տոկոս տարեկան բարձրացում, իսկ ամբիոնների խոշորացման, կրեդիտային զնահատման համակարգի ներդրման և այլ փոփոխությունների արդյունքում հնարավոր

է բարձրացում լինի: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը հավելեց, որ զգալի ավելացում լինելու է գիտական համակազմի աշխատողների համար:

Սովորող անդամ Մ. Վարդումյանը բարձրացրեց մարտական ծառայություն անցած ուսանողներին տրամադրվող զեղչի հարցում ՄՈԳ-ի շեմի նպատակահարմարության հարցը, ինչին ի պատասխան՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նկատեց, որ այդ խնդիրը գտնվում է կառավարության որոշման դաշտում, և կարևորվում է առաջադիմությունը, քանի որ առանց այդ էլ սահմանված ՄՈԳ-ի 11 միավոր շեմը շատ ցածր ցուցանիշ է:

**Որոշեցին.** - ԵՊՀ 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

**6.Լսեցին.**- «Թալիշերենի դասագիրք» (հեղ.՝ Վ. Ոսկանյան, Հ. Ավյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ հայաստանյան ու միջազգային իրականության մեջ սա առաջին դասագիրքն է, որը 2017թ. սկսած կիրառվում է իրանագիտության ամբիոնի ուսումնական գործընթացում:

**Որոշեցին.** – «Թալիշերենի դասագիրք» (հեղ.՝ Վ. Ոսկանյան, Հ. Ավյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք երաշխավորել հրատարակության և միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

**7.Լսեցին.**- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. մաս առաջին» (հեղ.՝ Վ. Հովհաննիսյան, Ս. Մեղրյան, Ա. Ղարայան, Տ. Մարկոսյան, Վ. Եսայան, Պ. Թադևոսյան, Վ. Գրիգորյան, Ա. Միքայելյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու մասին:

**Որոշեցին.**- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. մաս առաջին» (հեղ.՝ Վ. Հովհաննիսյան, Ս. Մեղրյան, Ա. Ղարայան, Տ. Մարկոսյան, Վ. Եսայան, Պ. Թադևոսյան, Վ. Գրիգորյան, Ա. Միքայելյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք երաշխավորել հրատարակության:

Գիտական խորհրդի նախագահ՝

Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

24.01.2022թ.